


ՀԱՅՅՈՒՆԻ ՄՈՏԵՆԱԿՆԵ ԿՐԹԱԿՓՈՒՄ ՀԱՅԵՐՈՒՆ

Posted on July 22, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Հարցազրոյցը վարեց՝ Համօ Մոսկոֆեան, Պէյրուզ, 21 Յուլիս 2010



**Հարցեր՝ ուղղուած Լիբանանի Կեդր. Դրամատան
Նախկին փոխ կառավարիչ՝ Սկրտիչ Պուլտուքեանին**

ՀԱՐՑՈՒՄ.- Հայկազեան համալսարանի նախկին նախագահ Ճոն Մարգարեան ԱՄՆ-ի մէջ հրատարակած իր գիրքին մէջ կը յիշատակէ Ձեզ որպէս առեւտրական վարչագիտութեան բաժանմունքի հիմնադիր: Ինչպէ՞ս են Ձեր կապերը այսօր ակադեմական ուսուցման համակարգին հետ:

Հարցազրոյցը վարեց՝ Համօ Մոսկոֆեան, Պէյրուզ, 21 Յուլիս 2010



**Հարցեր՝ ուղղուած Լիբանանի Կեդր. Դրամատան
Նախկին փոխ կառավարիչ՝ Սկրտիչ Պուլտուքեանին**

ՀԱՐՑՈՒՄ.- Հայկազեան համալսարանի նախկին նախագահ Ճոն Մարգարեան ԱՄՆ-ի մէջ հրատարակած իր գիրքին մէջ կը յիշատակէ Ձեզ որպէս առեւտրական վարչագիտութեան բաժանմունքի հիմնադիր: Ինչպէ՞ս են Ձեր կապերը այսօր ակադեմական ուսուցման համակարգին հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Այո՛, նշմարեցի Հայկազեան համալսարանի հիմնադիր եւ նախկին նախագահ Ճոն Մարգարեանի վերջին հրատարակած գիրքը, որուն մէջ ան կը յիշատակէ անունս՝ Առեւտրական վարչագիտութեան եւ տնտեսական բաժանմունքներուն որպէս հիմնադիր ու ձեռնարկող մինչեւ 1974 եւ միեւնոյն ատեն դասախօս՝ ու կը վկայէ, թէ համալսարանին այս ֆաքուլթեթը կազմեց հաստատութեան յաջողութեան պիւտճեական հիմնաքարը (cornerstone), առանց որուն համալսարանին ապագան պիտի մար անորոշ: Ինչ որ գրուած է այդ գիրքին մէջ, իրականութեան մէկ տասներորդն է:

Ինծի կ'ընկերակցեր՝ որպէս օգնական այս ծրագրի իրականացման եւ յաջողութեան, Տիար Գ. Քեպապճեանը, վաղեմի դասընկեր, իր մասնագիտութիւնն էր տոմարակալութիւնը:

1973ին Պէյրուզի British Councilը գնահատական իր մէկ ուսումնասիրութեանց մէջ կը վկայէր, թէ այդ ժամանակուան 4 գլխաւոր համալսարաններուն մէջ, Հայկազեան համալսարանի Առեւտրական վարչագիտութեան բաժանմունքը ամենէն փայլուն եւ ամենէն յաջող ծրագիրը կը գործադրէր:

Պրն. Մոսկոֆեան, նշմարեցի նաեւ ձեր անունը այդ գիրքին մէջ, ուր նախագահ Ճոն

Մարգարեան էջեր տրամադրած է ձեզի:

Գալով ակադեմական ասպարեզիս, Քասիքի համալսարանը կը դասաւանդեմ MBA կարգերուն: Ժամանակի սակաւութիւնը զիս չ'արտօնէր աւելի բացուիլ:

ՀԱՐՑՈՒՄ.- *Տեղացի լիբանանցիներ կ'ըսեն, թէ հայերը Լիբանանի մէջ ունին առեւտրական եւ ճարտարարուեստական յաջող ձեռնարկներ, սակայն անոնցմէ շատ քիչեր հաստատուեցան Հայաստանի հանրապետութեան տարածքին:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Շիտակ է ըսուածը. ըստ ունեցած տեղեկութեանս, քիչեր առեւտրական հիմնարկներ հաստատեցին Լիբանանէն ու արտասահմանէն գլխաւորաբար SME-ները: Կրնայ ըլլալ որ օրէնքներէն տեղեակ չեն, կամ սահմանափակ դրամագլուխի տերեր են՝ քանի Լիբանանի մէջ եւ այլուր անոնք չեն գործեր որպէս անանուն ընկերութիւններ, զանազան պատճառներով, այսինքն՝ ընտանեկան ձեռնարկներ են՝ գրեթէ բոլոր լիբանանեան գործատերերու նման. մէկ խօսքով՝ multinational ընկերութիւններ չեն եւ կամ այլ զանազան պատճառներով, այդ ներդրումները չեն ըրած:

Սակայն, յոյս ունիմ, թէ ապագային անոր ժամանակը կու գայ: Արտասահմանեան ներդրողներէն գլխաւորները եղած են Մանուկեան ընտանիքը, HSBCին հիմնումը դիւրացնելով 90-ական թուականներուն եւ Խաչատուրեան երեք եղբայրները, որոնք մինչեւ այսօր կը ներդրեն միլիոնաւոր տոլարներ: Կան նաեւ Կարօ Յարութիւնեանեք, արժանթինահայեր եւ այլք: Ներդրամիտ թող ըլլան անոնք, որոնց անունը չեմ յիշատակած:

Իսկ ռուսական սփիւռքէն եղած են մեծամեծ ներդրումներ, հասկնալի պատճառներով՝ որոնցմէ գլխաւորը՝ տնտեսական միելնոյն կուլտուրայի պատկանիլն է, ռուսահայոց եւ Հայաստանի ժողովուրդին: Անոնք ալ յարգելի եւ ազնուական հայորդիներ են:

Հոս կ'ուզեմ կարեւոր էջ մը բանալ կապիտալիզմի “Էվոլուցիայի” մասին իմ ուսումնասիրութիւններէն հիմնուելով. կ'ուզեմ բաղդատական մը ընել շուկայական համակարգի սկզբնական շրջանին դրամագլուխի կազմաւորման մէջ Ճափոնի եւ Թուրքիոյ պարագաները:

1868-1912ի շրջանին, Ճափոնի wild capitalism-ի սկիզբը 16 մեծ ընտանիքներ _ որոնց Zaibatsu կ'որակեն, ճարտարարուեստական եւ ելեւմտական conglomerate-ներ էին: Դեռ մինչեւ այսօր, այս Zaibatsu-ները կը շարունակեն գործել: Անոնք են՝ Mitsui, Mitsubishi, Sumitomo եւ Yasuda՝ 4 մեծերը: Ասոնց կը հետեւին Asano, Fujita, Furukawa, Mori, Kawasaki, Nakajima, Nitchitsu, Nissan, Nomura, Okura, Riken եւ Shibusawa Դրամատանց պարագային՝ Fuji bank, Sanwa, Tokai եւ Da-ichi Kangyo Bank եղած են նաեւ 2 սնանկութիւններ:՝ Kirin եւ Asahi

Եթէ առնենք թրքական հանրապետութեան հիմնուելէն ասդին ներկայ հոլտիսկ ձեռնարկները, կարելի է թուարկել գլխաւորները. Galipoglu group, Uzel Holding, Haci Omer Sabanji Holding, Kalender Group, Atlas Holding, Nurol Group, Etap Group, NKM Group, Cukurova

Holding, Guris Holding, Koc Holding, Cagdas Holding, Cevahir Holding, TG of Companies եւ Eczacibasi Holding. Հոս չմոռնանք ըսելու թէ հանրապետութեան սկզբնական շրջանին, 20-ական թուականներուն, թրքական բռնագրաւումի օրէնքով, կարգ մը վերոյիշեալ հոլտինկներու դրամագլուխը բազմապատկուեցաւ Turkish Confiscation Bill-ով: Իսկ 1919 Մալթա կղզին աքսորուածները վերադարձան ու մաս մըն ալ այդ դատապարտուածներուն շնորհուեցան փոքրամասնութեանց ինչքերը: Անոնց barons of deportation անունը կու տան: Նոյնը պատահեցաւ 50-ական թուականներուն:

Կ'ըսուի նաեւ որ 1915ի վերջը, հայկական գերեզմաններուն մէջ թաղուած եւ եկեղեցիներուն գմբէթները գետեղուած հայ ժողովուրդին ոսկիները օգտագործուած եւ կարգ մը հոլտինկներուն տէրերուն կողմէ: Հապա ինչո՞ւ Ատանայի հայկական գերեզմանատան վրայ կառուցուի արդարութեան պալատ մը այդ հոլտինկներուն տէրերէն մէկուն նուիրատուութեամբ:

Մեր հայրենիքի հանրապետութեան հիմնուելէն ետք տակաւին չունեցանք հարիւրամեայ շրջան մը, որպէսզի կազմաւորուին հայկական հոլտինկները: Առաւել, չունենալով ծով, սահմանափակումը, ժողովուրդին թուաքանակն ու աշխարհագրական տարածքը, եւ այլ պատճառներ, չունինք եւ ոչ ալ կրնանք յաւակնիլ ունենալ Ճափոնի եւ Թուրքիոյ տնտեսական ծաւալը: Սակայն կրնանք հետեւիլ Չուիցերիոյ տնտեսական օրինակին եւ ունենալ յարաբերական ծաւալ:

Անշուշտ Հայաստան հաստատուեցան նաեւ, կուսակցութիւններ ու միսիոնարներ, NGOներ եւ բարեգործական ու մշակութային բազմաթիւ հաստատութիւններ:

ՀԱՐՑՈՒՄ.- *Վերջերս տեղի ունեցած իտալեւա-թրքական դիւանագիտական բախումները «խաղաղութեան եւ ազատութեան» նաւախումբի վրայ գործուած յարձակումէն ետք՝ նոր իրադարձութիւններու դուռ բացաւ. ինչպէ՞ս կը մեկնաբանէք այս բոլորը:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Չնայած երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող լարուածութեան, այս մէկը ժամանակաւոր է արիւնով շպարուած եւ այս պետութիւնները գաղտնօրէն պատրաստակամութիւն կը ցուցաբերեն փոխ-յարաբերութիւններու բնականոնացման: Քաղաքականութիւնը կեղծիք է:

Ինչո՞ւ:

- _ Երկուքն ալ դաշնակից են Միացեալ Նահանգներուն:
- _ Երկուքն ալ երկուստեք կարիքը ունին իրարու, առանց մանրամասնութիւն- ներ տալու, թէ ինչու Թուրքիոյ ներկայ դեկաւարութիւնը կը ձգտի միանալ Եւրոպային ու արաբական երկիրներուն հետ կազմել տնտեսական գօտի: Սակայն այս մէկը չի նշանակեր հեռանալ Միացեալ Նահանգներէն: Թուրքիա կարող չէ խաղաղութիւն հաստատել Միջին Արեւելքի մէջ՝ ձեռնարկ մը, զոր չեն յաջողած 1948էն ի վեր՝ իրենց

շահերէն մեկնած Միացեալ Նահանգներն ու այլ հետաքրքրուած պետութիւնները:

Ճիշդ է, որ Թուրքիոյ տնտեսութիւնը որպէս emerging economy մեծ յաջողութիւններ արձանագրած է արաբական եւ այլ շուկաներուն մէջ վերջերս, բայց որեւէ ոյժ եւ արդիւնաբերութիւն ունին իրենց ներքին եւ թէ արտաքին սահմանափակումներն ու թշնամիները: Յաջողութեան բանալին տնտեսական յառաջխաղացքը շարունակել գիտնալն է շուկայական համակարգին մէջ:

Ողբացեալ հայրս կ'ըսեր. “Չաթալ դազըի չախըլմազ”, այսինքն՝ սահմանափակչութիւն: Բնաւ յոյսերնիդ մի՛ դնէք այս երկու պետութիւններուն հակամարտին՝ որպէս գլխաւոր դրոյապատճառ Յեղասպանութեան ճանաչումին հրեական պետութեան կողմէ: Այդ ըսել չէ՝ դադրեցնել պայքարը: Ընդհակառակը, բոլոր միջոցները պետք է օգտագործել նպատակին հասնելու համար:

ՀԱՐՑՈՒՄ.- *Վերջին ամիսներուն աշխոյժ գործունեութիւն կը ծաւալէք ոչ միայն Լիբանանի եւ Միջին Արեւելքի ֆինանսական շրջանակներու՝ այլեւ հայ թէ օտարալեզու մամուլին մէջ հանդէս գալով հեղինակաւոր յօդուածներով եւ հարցազրոյցներով: Ինչպէ՞ս կը բացատրէք այս գործունեութեան պատճառներն ու նպատակները:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Շիտակը ըսելով, վերջին 6 ամիսներուն, առիթը ընծայուեցաւ այցելելու Եմեն, Պաղտատ ու Յորդանան դրամատնային գործիս բերումով:

«Yemen Times» օրաթերթին տուած եմ հարցազրոյց մը Եմենի դրամատնային կառոյցին եւ դրամատուներու գործունեութեանց (տեսնել [www. Migdrij.com](http://www.Migdrij.com) նոր կայքէջս):

Պաղտատի մէջ ուսումնասիրութիւն մը պատրաստած եմ գոյութիւն ունեցող եւ նոր հիմնուած դրամատուներու մասին: Յորդանանի մէջ կը հետեւիմ “Մադթաս”ի մէջ Յորդանանի պետութեան կողմէ հայ համայնքին շնորհուած հողամասին վրայ կառուցուելիք եկեղեցիին: Մադթասը Յիսուսի Մկրտութեան վայրն է Յորդանանի մէջ:

Յունիս 9-ին Սալամ կուսակցութեան տարեկան congress-ին արտայայտուեցայ Լիբանան-Սուրիա տնտեսական լրացուցիչ կամ լրացումի պայմաններուն:

Յունիս 24-ին, միջազգային Rotaryի 2450 շրջանի 33-րդ congress-ին, որպէս key note speaker դասախօս՝ ներկայացուցի «Serve Above Self» փաստաթուղթը:

Աջակցեցայ նաեւ «Դիտակ» պարբերաթերթի վերջին հրատարակութեան 4 յօդուածներով: «Ալ Մասարէֆ Էլ-Արապիյյա» ամսաթերթին մէջ ստորագրեցի յօդուած մը “ոսկիի” մասին:

Պատրաստած եմ suspension երկարեայ կամուրջի մը ծրագիրը, Թապարժայէն մինչեւ Քասիք, Ճիւնիի ծոցի տարածքին, զոր կը յուսամ որ ծառայէ հիւսիս-հարաւ երթելեկի հարցի լուծումին:

Այժմ compact diskի վրայ կը հրատարակեմ, արաբերէն լեզուով, 470 էջնոց «THE

MANAGEMENT OF CORRESPONDENT BANKING»ի հատորս:

ՀԱՐՑՈՒՄ.- *Լիբանանն ու տարածաշրջանը կ’անցնին բաւականին բարդ գործընթացներու ընդմէջէն: Սակայն Լիբանանի դրամատնային համակարգն ու ֆինանսական իրավիճակը կը մնան ամուր որ բարգաւաճ: Ինչպիսի՞ն են Ձեր կանխագուշակումները յետագայ ժամանակաշրջանին համար:*

ՊԱՏԱՍԽԱՆ.- Լիբանանի դրամատնային համակարգի իրավիճակը կը մնայ գործունեայ եւ բարգաւաճ, ինչպէս որ արտայայտուած եմ իմ վերջին հրատարակած գիրքիս մէջ՝ «Լիբանանի Դրամատնային Համակարգը» (THE BANKING SYSTEM IN LEBANON. SEPT 2009) Այնքան ատեն որ Լիբանան որպէս դրամատնային համակարգ, վստահութիւն կը ներշնչէ աւանդատուներուն եւ ներդրողներուն, համակարգը կը մնայ հաստատուն եւ աւանդատուներու գումարները կը մնան ապահով:

Արտասահմանեան այլ երկիրներու դրամատնային համակարգերը կը գտնուին տակաւին շատ բխրուն վիճակի մէջ՝ Միացեալ Նահանգներէն մինչեւ Եւրոպաները: Տեսնենք Եւրոպայի վերջին stress test-երուն արդիւնքները:

Վերջերս՝ նոյնիսկ եթէ Միացեալ Նահանգներու Նախագահ Պարաք Օպամա նոր օրէնսդրութիւններ կը ներկայացնէ Ա.Մ.Ն.ի մէջ վստահութիւն ներշնչելու համար, անոր գործադրութիւնը կը մնայ հարցական. հարցը օրէնսդրութիւնը չէ, այլ պարկեշտ, անձնուրաց եւ վստահելի պաշտօնեաներու հարցն է:

1933-ին ալ նոր օրէնսդրութիւն ներկայացուեցաւ, սակայն տարիներու ընթացքին այդ օրէնքներու գործադրութիւնն ու վերահսկումը եղան թոյլ եւ անկատար: Շուկայի լարախաղացները շատ լաւ գիտեն ինչպէս օրէնք մը խափանել (circumvent)

Եւրոպացի եւ ամերիկացի ֆինանսական հաստատութիւններ ինչպէ՞ս պիտի դիմագրաւեն 2011-ին, իր պայմանաժամին հասնող 5 “թրիլիոնաւոր” իրենց պարտաւորութիւնները:

Վերադառնալով Լիբանանի տնտեսական կացութեան, ճիշդ է որ դրամատնային կացութիւնը ապահով է եւ զբօսաշրջիկները անհամար, սակայն ներքին ընկերատնտեսական իրավիճակը այդքան ալ փայլուն չէ. անգործութիւնը, արտագաղթը, չքաւորութիւնը կաշառակերութիւնը, ելեկտրական ոյժի անբաւարարութիւնն ու բաշխումը, 52 միլիոն տուարի պետական պարտքերը, երթեւեկի անլուծելի հարցը, անապահովութիւնը, հողամասերու եւ բնակարանային սղութիւնը, պենզինի գիներուն յաւելումը ծանր կը կշռեն ժողովուրդին վրայ: Դժբախտաբար՝ ճամբորդական տոմսերուն տուրքերուն, պենզինի վրայ դրուած տուրքերուն վրայ կրնայ նոր տուրք մը աւելնալ, բոլոր սպառողական համամարդկային դասակարգին, համայն աշխարհի մէջ, այդ ալ պիտի ըլլայ տուրք՝ դրամատնային գործարքներուն:

Առաւել՝ շրջանային եւ ներքին քաղաքական կնճռոտ կարգավիճակները, եւ Մարտ 8 եւ

14 հակամարտութիւնը, այդքան ալ վարդազոյն ապագայ ցոյց չեն շնորհեր: Կայ նաեւ միջազգային դատարանին խնդիրը... Կարդալ Ad Dabbour արաբական երգիծական շաբաթաթերթի Յուլիս 16, 2010 թիւը:

ՀԱՐՑՈՒՄ.- Հապա՞ Euro-ին վիճակը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Չեմ ուզեր վախցնել, բայց, ան ալ ըսեմ որ Euro-ն պետութեան մը դրամանիշը չէ: Այո չէ՛, այլ Եւրոպայի համայնքին կը պատկանի զոր տակաւին պետութիւն մը չէ: Տիար Ժոզէֆ Ուղուրլեան, Լիբանանի Կեդրոնական դրամատան երկարամեայ փոխ-կառավարիչը հրատարակեց նշանաւոր գիրք մը «Une Monnaie, Un Etat» այս մասին: Կարդալ զայն:

Դրամանիշին ներքին եւ արտաքին արժեքները կը կազմաւորուին ամուր հիմերու վրայ, երբ այդ պետութեան դրամական եւ գանձային քաղաքականութիւնները ներդաշնակ կ'ընթանան: Երբ Euro-ն հաստատուեցաւ 2000 թուականին, այդ մէկը հիմնուեցաւ տնտեսական 4 համընկնումի չափանիշներուն վրայ, որոնցմէ գլխաւորը՝ իւրաքանչիւր պետութեան պարտքի համեմատութիւնն էր ի դիմաց ընդհանուր համախառն արդիւնաբերութեան 60% եւ պիւտճէի պակասորդը, ի դիմաց ընդհանուր համախառն արդիւնաբերութեան 3% պետք չէ որ անցներ: Հոս է որ այս համեմատութիւնները խախտեցան, Եւրոպական կարգ մը երկիրներու կողմէ, իրենց անհանդուրժելի պարտքերով, պետութեանց անհամար եւ անհաշիւ ծախսերով եւ պակասորդի յաւելումով:

ՀԱՐՑՈՒՄ.- Այսօր եւս, կրօնափոխ հայերու “յայտնաբերումը”, իրենց հոծ ներկայութեամբ Արեւմտեան Հայաստանի թէ Սփիւռքի մէջ՝ նոր մարտահրաւերներու կ'առաջնորդէ հայերս: Որո՞նք են Ձեր առաջարկները այս կապակցութեամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Այո՛, նոր մարտահրաւեր մըն է այս՝ համայն հայութեան, եթէ կը փափաքինք հայօրէն մօտենալ այս լուրջ հարցին:

Այս մէկը եւ այլ հարցեր նոր մարտահրաւերներ են աշխարհացրիւ հայերուն, եւ Հայաստանի հանրապետութեան ղեկավարութեանց:

Դժուար է ինծի առաջարկները ներկայացնել այս առնչութեամբ: Այս մէկը կը կարօտի ուսումնասիրութեանց եւ բոլոր կազմակերպութիւններու ղեկավարութեանց հետաքրքրութեանց եւ քննարկումին, ներառեալ, հայաստանեայց եկեղեցիի ղեկավարութեանց:

Եթէ congress-ի կարիքը ստեղծուի, ինչպէս 1979ի Համահայկական Քոնկրեսին, ստիպուած ենք մօտենալ շատ լրջօրէն ու ներդաշնակ: Եթէ հարկը չտեսնուէր congress-ին՝ ուրեմն այլ կերպի լուծումներ պետք է որոնել այս նոր մարտահրաւերին:

Մեր ազգին համար այսօր երկու կարեւոր մեկա-մարտահրաւերներ գոյութիւն ունին: Թուաքանակ եւ աշխարհագրական տարածք: Այս տեսանկիւնէն տեսնելու կարիքը

առաջնահերթ պետք է սեպել ներկայիս:

ՀԱՐՑՈՒՄ.- Ձեր երկարամեայ գործունեութենէն մեկնելով, որո՞նք են Ձեր խօսքն ու պատգամը հայ նոր սերունդին:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ինչպէս ըսած էի, 2010 նոր տարուան սեմին, այդ 20-ները հիմնական են, որպէս մարդ էակ եւ որպէս հայ անհատ: Կարելի է աւելցնել նաեւ՝

1. Ըլլալ անվախ, յանդուգն ու պայքարող, երբ արդարութիւնը մեր կողմն է:
2. Ըլլալ համարձակ եւ խիզախ մեր ազգային մարտահրաւերներուն շուրջ:
3. Մեր ներքին ճակատը զօրացնել, մոռնալով 20րդ դարուն ստեղծուած 100ամեայ ներքին պառակտումներն ու թշնամութիւնները, նախանձներն ու սնապարծութիւնները, ինչպէս նաեւ պոռոտախօսներն ու յոխորտացողները:
4. Ազգային շահերը դասել գերիվեր բոլոր անհատական եւ հատուածական նկատումներէ:
5. Ընդունիլ եւ չանտեսել ոեւէ հայ կամ կէս հայ, ինչ որ ըլլայ անոր ընկերային դասակարգը, դաւանանքը, գոյնը որպէս օգտակար տարր մեր բոլոր մարտահրաւերներու իրականացման:

Այս բոլորը կը նշանակեն՝ օրական պայքար, որպէս մարդ արարած եւ որպէս հայորդի:

ՀԱՐՑՈՒՄ.- Վերջին հարցում մը: Ֆութպոլի ակարտական խաղերուն, դուք որուն հետ էիք եւ ինչո՞ւ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Անշուշտ թէ Սպանիոյ հետ, թէ ինչո՞ւ. շատ պարզ տրամաբանութեամբ: Սպանացիք սկիզբէն՝ խաղերու սկիզբէն կը խաղային

- ա-արագ, միւս խումբերէն աւելի արագ փոխանցումներով:
- բ-նուազագոյն սխալներով, միշտ գնդակը հասցնելով իր տեղին:
- գ-բարձր թեքնիքով,
- դ-ամենէն կարեւորը՝ խմբային խաղ, այսինքն՝ team work

Այս չորս կետերը մենք եթէ կիրարկենք մեր ամենօրեայ կեանքի ընթացքին, որպէս անհատ, որպէս կազմակերպութիւն կամ որպէս պետութիւն՝ անպայման կը յաջողիք մեր գործերուն մէջ, ուրիշներէ աւելին:

